## ՀՀ ԳԱԱ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1997 թվի հունվարից Շենգավիթի համայնքի թիվ 12 դպրոցն անվանվեց Վիկտոր Համբարձումյանի անունով: Այդ հանգամանքը հպարտությամբ լցրեց թե՛ ուսուցիչների, թե՛ ծնողների եւ թե՛ բարձր դասարանցիների հոգին: Մեծացավ պատասխանատվության զգացումը: Երկրորդ հազարամյակի վերջին հարյուրյակի թիվ մեկ գիտնականը համարվեց Վիկտոր Համազասպի Համբարձումյանը: Նորվեգացի ականավոր աստղագետ Չաադրան ասել է. *«Եթե երկրագնդում կա երեք հանճարեղ աստղագետ, ապա, անկասկած, մեկը Վ. Համբարձումյանն է»*: Աշխարհի հարյուրավոր աստղագետներ սովորել, մասնագիտացել են Վ. Համբարձումյանի աշխատությունների շնորհիվ: 1995թ. Ճապոնիայում, աստղաֆիզիկոսների գիտաժողովից հետո, ճաշկերույթի ժամանակ մեծարանքի բաժակ է բարձրացվում հայ ժողովրդի եւ նրա սիրասուն զավակ, աշխարհահռչակ աստղագետ Վ. Համբարձումյանի պատվին: Ճապոնացիները խոստովանում են, որ խորին հարգանքի է արժանի այն ժողովուրդը, որը Համբարձումյանի եւ նրա դաստիարակած շնորհալի երիտասարդ աստղաֆիզիկոսների նման զավակներ ունի: Ավա՜ղ, այսօր մեծացել է անտարբերությունն ուսման եւ կրթության նկատմամբ: Հնագույն ժամանակներում էլ Հայաստանը եղել է աստղագիտության օրրան: Այսօր էլ նա պետք է լինի այդպիսին: Հավանաբար այդպես է մտածել մեծ գիտնականի անունը կրող դպրոցի տնօրեն պրն Վ. Ստեփանյանը՝ բազմիցս գնալով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, դիմելով տարբեր գիտնականների, աշխատողների՝ թիվ 12՝ Վ. Համբարձումյանի անունը կրող դպրոցին օժանդակելու եւ դպրոցը համբարձումյանականորեն ձեւավորելու: Ցավոք, տնօրենի խնդրանքներին ՀՀ ազգային ակադեմիան մնաց անտարբեր: Աշակերտների հոգում աստղաֆիզիկայի նկատմամբ սեր եւ հետաքրքրություն արթնացնելու նպատակով պետք էր ձեռք բերել բազմաթիվ նյութեր՝ նկարներ՝ Բյուրականի աստղադիտարանի, աստղադիտակների, համաստեղությունների քարտեզների, Վ.Համբարձումյանի՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով տպագրված մեկական աշխատությունները, նրա ընտանիքի անդամների լուսանկարները եւ այլ նյութեր, որոնք անհրաժեշտ են մեծ գիտնականի անձի, նրա գիտական գործունեության եւ հայտնագործությունների մասին իմանալու: Ավելին. ինքը՝ Ակադեմիան, պետք է շահագրգռված լիներ, որ հետաքրքրությունն աստղագիտության նկատմամբ պետք է սկսել դպրոցից: Հաճախ համալսարանում ձգտում են սովորել առավել եկամտաբեր գիտություններ: Ըստ իս՝ այդ անտարբերությունը Վ. Համբարձումյանի անվան թիվ 12 դպրոցի տնօրենի խնդրանքի նկատմամբ եւ ցավալի է, եւ զարմանալի, եւ տարակուսելի: Կարծում եմ, որ մեր Ազգային ակադեմիան կուղղի իր սխալը եւ կօժանդակի հիշյալ դպրոցին՝ Վ.Համբարձումյանին արժանի սրահ ձեւավորելու:

Ս. ՇԱԹԻՐՅԱՆ